ՀՀ ԿԳՄՄՆ «ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ուսուցչի կողմից երեխաների ուսումնառության ընթացքում նկատված կրթական կարիքների բացահայտումը

Առարկա՝ Հայոց լեզու և գրականություն

Կատարող՝ Հասմիկ Բաղդասարյան

Ղեկավար՝ Արմինե Ղազարյան

Դպրոց՝ Ծովագյուղի միջնակարգ դպրոց

ՍԵՎԱՆ- 2023

ԲՈՎԱՆԴԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……..……..3

ԳԼՈՒԽ 1.

1.1. Ներառական կրթություն հասկացությունը……..…..……**5**

1.2. Ներառական կրթության գործընթացը նպատակները և արդյունքները…..……..…**7**

ԳԼՈՒԽ 2.

2.1. ՈՒսումնառության համընդհանուր ձևավորումը և կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը…….....…..……**12**

2.2. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում և ԱՈՒՊ-ներ…**15**

2.3. Հայոց լեզու և գրականություն դասավանդող ուսուցչի դերը ներառական կրթության մեջ…….....…….…….……**19**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……..…….....21

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……...……...22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

<u>Թեմայի արդիականությունը:</u> Ներկա ժամանակներում լուրջ խնդիրներից է համարվում երեխաների և հատկապես կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխաների զարգացմանն ու կրթությանը խոչընդոտող հանգամանքները: Հատուկ կարիքներ ունեցող երեխաների կրթությունը կազմակերպելու համար լավագույն լուծումն է ներառական կրթությունը:

Ներառական կրթությունը կրթական համակարգ է, որն ուղղված է հավասար կրթության ապահովմանը և հասարակության մեջ հաշմանդամություն ունեցող մարդկանց ներգրավվածությանը: Ներառական կրթությունը ավելի մատչելի և հասանելի է դարձնում կրթությունը բոլորի համար: Սակայն պետք է փաստել այն, որ ներառական կրթությունը ոչ միանշանակ է ընդունվում բոլորի կողմից: Այսօր հաշմանդամություն ունեցող երեխաների վերաբերյալ շատ կարծրատիպեր կոտրվել են, սակայն երբ մարդիկ պետք է իրենց խոսքը գործով ապացուցեն այդտեղ նկատվում է որոշակի բաց: Շատերն են ասում, որ հաշմանդամություն ունեցող երեխան պետք է հաճախի մանկապարտեզ, սովորի դպրոցում, բայց դեմ են, որ իրենց երեխայի հետ սովորի նույն դասարանում: Նման գաղափարի տեր ծնողները իրենց երեխաներին առանձնացնում են հաշմանդամություն ունեցող երեխաներից և ցույց տալիս իրենց խտրական վերաբերմունքը: Հաշմանդամություն ունեցող երեխաներն ունեն նույն իրավունքներն, ինչպես մյուսները: Հատուկ պայմանների կարիքներ ունեցող են համարվում այն երեխաները, ովքեր ունեն երկարատև խնամքի, բուժման, վերականգնման կարիք, որոնք պահանջում են լիարժեք, բազմակողմանի և ծրագրային մոտեցում:

Հատուկ կարիքներով երեխաները նրանք են, ովքեր ունեն հոգեբանական, ֆիզիկական, մտավոր կամ վարքային խնդիրներ: Ամբողջ աշխարհում ներառումը այլևս ապրելակերպ է, մարդկանց համատեղ ապրելու, աշխատելու և սովորելու կենսակերպ: Յուրաքանչյուր երեխա իրեն պետք է կարևորված զգա հասարակությունում:

Ներառման հիմնահարցերը դեռևս արդիական են Հայաստանում, ինչպես մանկավարժների պատրաստման ամբողջ գործընթացում (հիմնականում վերաբերում են հատուկ կրթությանը) այնպես էլ մանկավարժների՝ պետության ու դոնոր կազմակերպությունների ֆինանսավորմամբ իրականացվող վերապատրաստումներում: Տարբերությունները զգալի են մանկավարժների պատրաստման և վերապատրաստումների ծրագրերեում, հատկապես

հաշմանդամության կենսաբանահոգեբանասոցիալական մոդելի վրա հիմնված ամբողջական մոտեցման տեսակետից:

Այսպիսով համընդհանուր ներառական կրթության առանձնահատկությունների ուսումնասիրությունը կարևոր է հասարակության մեջ ծառացած խնդիրների լուծման, ինչպես նաև առողջ սերունդ դաստիարակելու գործում:

<u>Հետազոտության նպատակը</u> և <u>խնդիրները:</u> Հետազոտության հիմնական նպատակն է ներկայացնել հանրակրթական դպրոցներում ուսուցչի կողմից երեխաների ուսումնառության ընթացքում նկատված կրթական կարիքների բացահայտումը:

Առաջադրված նպատակին հասնելու համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ *խնդիրները՝*

1. Ուսումնասիրել հիմնախնդրի վերաբերյալ մասնագիտական գրականություն:
2. Ներկայացնել ներառական կրթուրյան նպատակը, խնդիրները և արդյունքները:
3. Վերլուծել ուսուցչի դերը ներառական կրթության կազմակերպման գործում:

ԳԼՈՒԽ 1.

1.1. Ներառական կրթություն հասկացությունը

Ներառական կրթությունը կրթական համակարգ է, որն ուղղված է հավասար կրթության ապահովմանը և հասարակության մեջ հաշմանդամություն ունեցող մարդկանց ներգրավվածության ապահովմանը: Ներառական կրթությունը ավելի մատչելի և հասանելի է դարձնում կրթությունը բոլորի համար:

Մարդկության զարգացման ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ձևավորումն ու սահմանումն անցել են երկար ճանապարհ՝

խղճահարությունից մինչև սոցիալական բազմաթիվ ծառայությունների մատուցում: Այսօր աշխարհն արդեն ընդունում է հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման գաղափարը:

Ներկայումս հաշմանդամության ընկալման վերաբերյալ գոյություն ունեն և պրակտիկայում կամա թե ակամա կիրառվում են երկու մոդելներ՝ բժշկական ու բարեգործական և սոցիալական, որոնցից յուրաքանչյուրը պատկերացում է տալիս այն մասին, թե ինչն է որոշիչ «հաշմանդամ» բառի մեջ:

Հայաստանում խորհրդային ժամանակներից ի վեր հաշմանդամությունը համարվել է և համարվում է անձի խնդիրը, որը նշանակում է, որ հաշմանդամությունը «հիվանդություն» է, որի պատճառով անձի կենսագործունեությունը սահմանափակվում է, և, հետևաբար, ջանքերն ուղղվում են անձի վիճակի բարելավմանը:

Չբացառելով հաշմանդամության բժշկական մոդելի կարևորությունը՝ հաշմանդամության սոցիալական մոդելը հաշմանդամությունը դիտարկում է որպես հասարակության սոցիալ-մշակութային արժեքների հետևանք: Այս մոտեցումը բացարձակապես կառուցված է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վրա և կոչ է անում ստեղծել հավասար հնարավորություններ և լիարժեք մասնակցություն հասարակության բոլոր քաղաքացիների համար:

Ներառական կրթությունը կրթական այնպիսի ծրագիր է, որը բացառում է ամեն տեսակ խտրականություն երեխաների նկատմամբ, ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց հանդեպ, կրթական համակարգում ստեղծում է ուրույն պայմաններ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքներ ունեցող անձանց համար: Ներառական կրթությունը հանրակրթության զարգացման գործընթաց է, որը ենթադրում է կրթության մատչելիություն բոլորի համար, երեխաների ամենատարբեր կարիքների բավարարմանն ուղղված բոլոր տեսակի միջոցների ապահովում, ինչը հանրակրթական դպրոց մտնելու այցեքարտ է ընձեռնում հաշմանդամություն ունեցող երեխաներին: Ներառական կրթությունը ձգտում է հասնել ուսուցման նկատմամբ առավել ճկուն մոտեցման՝ բավարարելու մարդկանց զանազան կրթական պահանջները: Եթե ներառական կրթության մտցրած փոփոխությունները ուսուցումն ավելի արդյունավետ դարձնեն, ապա կշահեն բոլոր երեխաները, այլ ոչ միայն առանձնահատուկ կրթության կարիքներ ունեցողները:Չի կարելի ստեղծել ներառական կրթության համընդհանուր կաղապար, որը կարելի լինի առանց որևէ փոփոխության

ներմուծել յուրաքանչյուր հասարակություն: Ամեն մի հանրություն ինքը պիտի մշակի և իրագործի սեփական գաղափարները:[1]

Ներառական կրթության հիմքում մարդու՝ կրթությունից օգտվելու իրավունքն է: Միջազգային տարբեր փաստաթղթերը պետություններին ուղղորդում են իրենց ջանքերն ուղղելու իրավունքահենք կրթությանը: ՅՈՒՆԻՍԵՖ-ի սահմանման համաձայն, կրթական համակարգը ներառական է՝ եթե ներառում է բոլոր աշակերտներին և ողջունում ու օժանդակում է նրանց սովորելու հարցում: Ոչ ոք չպետք է բացառվի: Բոլոր երեխաները՝ ներառյալ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողները, ունեն կրթության իրավունք (ՅՈՒՆԻՍԵՖ, 2017): Այս պնդումը համահունչ է ՄԱԿ-ի՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի ներառական կրթությանը վերաբերող ընդհանուր մեկնաբանություն 4-ի հետ, որը կրթությունը սահմանում է որպես. §մարդու հիմնարար իրավունք¦ և §սկզբունք, որն արժևորում է բոլոր սովորողների բարօրությունը, հարգում է նրանց արժանապատվությունն ու ինքնուրույնությունը և ընդունում է հասարակության մեջ արդյունավետորեն ներառվելու ու իրենց նպաստը բերելու անհատների պահանջմունքները և կարողությունը: (Միավորված ազգեր, 2006): Ըստ ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ ներառումը սովորողների բազմազանությանը դրականորեն արձագանքել ու անհատական տարբերությունները ոչ թե որպես խնդիր, այլ որպես ուսուցումը հարստացնելու հնարավորություն (ՅՈՒՆԵՍԿՕ, 2005):Ներառումը համակարգային բարեփոխման շարունակական գործընթաց է, որը նախատեսում է փոփոխություններ դասավանդման մեջ և ուսումնական ծրագրերում, դպրոցական շենքերում, դասասենյակներում, խաղալու համար հատկացված տարածքներում, տրանսպորտում, կրթության քաղաքականություններում և ռազմավարություններում՝ տվյալ տարիքի բոլոր աշակերտներին իրենց պահանջներին ու նախասիրություններին լավագույնս համապատասխանող՝ հավասար և մասնակցային ուսումնական փորձառություն ու միջավայր տրամադրելու տեսլականով: Հետևաբար, անցումը դեպի ներառում ոչ թե պարզապես տեխնիկական կամ կազմակերպչական փոփոխություն է, այլ նաև հստակ փիլիսոփայությանը հավատարիմ շարժում: Ներառումն արդյունավետորեն իրականացնելու համար երկրները պետք է գործնական գաղափարների հետ մեկտեղ սահմանեն կրթության ներառականության սկզբունքներ (ՅՈՒՆԵՍԿՕ, 2005):[2]

---

[1] Ի՞նչ ասել է ներառական կրթություն
https://parents.disabilityinfo.am/inclusive-education/

[2] Ներառական կրթության ռազմավարություններ, Դասագիրք Մինեսոթայի համալսարան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Հայաստանի Հանրապետություն ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակ

1.2. Ներառական կրթության գործընթացը նպատակները և արդյունքները

Հայաստանի Հանրապետությունը շատ երկրների նման համընդհանուր ներառական կրթությունը հռչակեց որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Կրթության մատչելիությունն ու հասանելիությունն որպես հասարակության զարգացման ու առաջընթացի հիմնական միջոց, ամրագրվել են դեռևս 1990- ականներին, երբ ՄԱԿ-ի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի անդամ երկրների կողմից ընդունվեցին երեխաների իրավունքների կոնվենցիան և Կրթությունը բոլորի համար համաշխարհային հռչակագիրը: 1994 թ. Աշխարհի 92 երկրների կառավարությունների ու 15 միջազգային կազմակերպությունների կողմից ստերագրված Սալամանկա հռչակագիրը սահմանեց,որ յուրաքանչյուր երեխա ունի կրթական առանձնահատկություն և կրթության հիմնարար իրավունք: Համաձայն այս հռչակագրի, կրթական ծրագրերը պետք է մշակվեն և իրականացվեն՝ հաշվի առնելով այդ առանձնահատկությունները: Ներառական կրթության գաղափարը Հայաստանում տեղ գտավ հռչակագրի ստորագրումից 11 տարի անց՝ 2005 թվականին, երբ ընդունվեց համապատասխան օրենքը:Դրանից միայն 2 տարի անց Երևանի 10 դպրոցներ ստացան ներառական դպրոցի կարգավիճակ: Հետագայում ներառական դպրոցի կարգավիճակ ստացան ոչ միայն Երևանի, այլ նաև մարզերի շատ դպրոցներ: Ծրագրված է, որ մինչև 2025 թիվը Հայաստանում գործող բոլոր հանրակրթական դպրոցները պետք է դառնան ներառական հասանելի և մատչելի լինի բոլոր երեխաների համար[3]:

Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև արդեն ողջ աշխարհում, ներառական կրթությունն այսօր համարվում է մի գործընթաց, որն անմիջապես արձագանքում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող «ԿԱՊԿՈՒ» երեխաների ուսուցման և դաստիարակության բազմակի կարիքներին՝ ներգրավվելով և ընդլայնելով նրանց մասնակցությունը կրթական գործընթացում, մշակութային և համայնքային կյանքում, միաժամանակ կանխելով նրանց `կրթական համակարգից դուրս մնալու խնդիրները: Ներառական կրթությունն այսօր ոչ միայն ընդունված գաղափարախոսություն է, այլ նաև՝ օրենքով հաստատագրված: Բազմաթիվ հանրակրթական դպրոցներ այսօր դառձել են ներառական: Դեռ ավելին՝ օրենքների փոփոխությունները միտված են այն բանին, որ Ներառական կրթություն հասկացությունը ընդհանրապես դուրս գա մանկավարժական հանրության

[3] Ներառական կրթությունը գործնականում(ուսումնամեթոդական ձեռնարկ)Պետրոսյան Ս., Երևան, 2018

խոսակցականից, ասել է թե՝ յուրաքանչյուր երեխա առանձնահատուկ է և յուրաքանչյուր երեխա առանձնահատուկ մոտեցման կարիք ունի[4][5]:

Ներառական կրթությունը մի համակարգ է, որը հենվում է բոլոր երեխաների, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք և սոցիալապես սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց կրթություն ստանալու իրավունքի վրա:Այն արձագանքում է բոլոր սովորողներին բազմազան կարիքներին , մեծացնում նրանց մասնակցությունը ուսումնական, մշակութային ու ժամանցային կյանքին:

Այն ենթադրու է փոփոխություններ և բարեփոխումներ կրթության բովանդակության, մոտեցումներին, կառույցների և մեթոդական համակարգի մեջ, տարածվում է համապատասխան տարիքային խմբի բոլոր երեխաների վրա: Ներառական կրթությունը ելնում է այն համոզմունքից, որ բոլոր երեխաներին կրթելը հանրակրթական համակարգի պարտականությունն է: Ներառումը լրացնում է հատուկ կրթությանը: Հատուկ կրթությունը զարգացել է առանձին փուլերով, որոնց ընթացքում ուսումնասիրվել են հաշմանդամ երեխաների և ուսումնական դժվարություններ ունեցող սովորողների կարիքների բավարարման տարբեր ուղիները: Որոշ դեպքերում հատուկ կրթությունը լրացրել է հանրակրթությանը, սակայն իրականացվել է մեկուսացված:

Վերջին տարիներին կասկածի տակ է դրվել առանձնացված կրթական համակարգերի նպատակահարմարությունը ինչպես մարդու իրավունքների սահմանափակման, այնպես էլ կրթության որակի ապահովման տեսանկյունից: Ներառական կրթության հանդեպ արդի մոտեցումը տարբերվում է նախկինում ընդունված այն տեսակետից, որ հատուկ կրթական կարիքներ ունեցող աշակերտները առանձին են կրթություն ստանում և ուսուցումն իրականացվում էր առանձին դասասենյակներում, նույնիսկ առանձին դպրոցներում: Մարդիկ ընդունել էին դա և արդեն հարմարվել էին այդ մտքին, որ հատուկ կրթություն՝ նշանակում է առանձին կրթություն[6]:

Առանձնացված հատուկ դպրոցներում երեխաներին ուսուցանելը հակասում է տան, ընտանիքի և համայնքի կյանքին մասնակցության նրանց իրավունքին: Չնայած հատուկ դպրոցների կրթական ծառայությունների որոշ առավելություններին՝

---

[4] «Ներառումը նախադպրոցական ուսումնական հաստատությունում: Խաղեր և վարժություններ:»Մեթոդական ուղեցույց ձեռնարկ մանկավարժների համար: Հեղինակների խումբ, ՀՄԿ, Երևան 2021 4. Նախադպրոցական կրթության մասին օրենք

[5] Ներառական կրթության հիմնախնդիրները, Հեղինակների խումբ, Գյումրի, «ԷԼԴՈՐԱԴՈ» հրատարակչություն, 2017

[6] Հայաստանի Հանրապետության օրենքը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին, http://edu.am/index.php?id=97&topMenu=-1&menu1=85&menu2=89&arch=0#g3

կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող «ԿԱՊԿՈՒ» երեխաների բաժանումը ընտանիքից ու տնից վկայում է այդպիսի մարդկանց նկատմամբ հասարակության մեջ գոյություն ունեցող նախապաշտմունքների մասին : Ներառական կրթությունն ընդունում է, որ բոլոր երեխաները տարբեր են, և հանրակրթական ժամակարգը պետք է հարմարվի բոլոր սովորողների անհատական պահանջմունքներին: Սակայն ներառում չի նշանակում բոլորին ձուլելու կամ միատեսակ դարձնելու ձգտում: Այն ընդունում է, որ երեխաները սովորում են տարբեր արագությամբ, իսկ ուսուցիչներին անհրաժեշտ է զինել ուսուցման գործընթացի ճկունությամբ[7]:

Որոշ ուսուցիչներ կարծում են, թե «ԿԱՊԿՈՒ» երեխաների ուսուցման համար իրենց անհրաժեշտ կլինեն հատուկ հմտություններ: Սակայն փորձը ցույց է տալիս, որ «ԿԱՊԿՈՒ» երեխաներին հանրակրթական գործընթացի մեջ ներգրավելու համար ընդամենն անհրաժեշտ է որակյալ, հասկանալի և մատչելի դասավանդում, որը

1. ենթադրում է երեխայի առանձնահատկություններին, անհատական կրթական պահանջմունքներին, զարգացման ընթացքին, ընդունակություններին և կարողություններին համապատասխանող տարբեր մեթոդների կիրառումը,
2. նպաստում է բոլոր սովորողների ակտիվության և կրթության որակի բարձրացմանը:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ընդգրկումը հանրակրթական դպրոցներ ուղորդի ուսուցիչներին կիրառելու նոր՝անձնակենտրոն ուսուցման մեթոդներ՝ ապահովելով մեծ թվով մասնակիցների ընդգրկվածություն ուսուցման գործընթացում:

Ներառական կրթության արդյունքները

Ներառական հանրակրթական դպրոցներում անհրաժեշտ է արմատապես փոխել ուսումնական գործընթացի կազմակերպումը: Որքան էլ որ այս 20 տարիների ընթացքում փորձեր արվեցին բարեփոխել, աշակերտակենտրոն դարձնել ուսուցումը, այնուամենայնիվ բուն գործընթացի կազմակերպման ձևը չփոխվեց: Այսօր դեռևս ուսուցման գործընթացի հիմնական կազմակերպման ձևը դաս-դասարանային համակարգն է, որտեղ իրադարձությունների ուսումնական նյութը մատուցողի, ստուգողի, գնահատողի և պատասխանատվությունը կրողի մենաշնորհն ամբողջովին ուսուցչինն է: Սակայն ուսումնական ժողովրդավար ձևը պահանջում է, որ գործընթացում յուրաքանչյուրը մասնակից լինի և պատասխանատու լինի թե՛ իր, թե՛ ուրիշի կատարած քայլերի համար: Ներկայիս համակարգում անհրաժեշտ է

[7] Միացյալ Նահանգներ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Հայաստանի Հանրապետություն ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակ:

աշակերտների մեջ ձևավորել այն գաղափարը, որ հիմնականում յուրաքանչյուրիս գործելակերպից է կախված մյուսների ճիշտ կամ հաջող գործելակերպը: Այսպիսի գաղափարախոսություն, աշխարհայացք, կայուն գործելաոճ և մտածելակերպ կարելի է անձի մեջ ձևավորել միայն այն դեպքում, երբ խոսքը գնում է համագործակցային մանկավարժության մասին, որտեղ իրավիճակների, ուսումնական նյութը սովորեցնելու, ստուգելու պատասխանատվությունը կրող ոչ միայն ուսուցիչն է, այլև խմբում սովորող յուրաքանչյուր երեխա[8]:

Ներկայիս ուսուցման խմբային՝ դաս-դասարանային համակարգն ունի սահմանափակումներ, որոնք ոչ թե թերություններ են, այլև բնորոշ են խմբային ուսուցման կազմակերպմանը: Խմբային՝ դաս-դասարանային համակարգի նման սահմանափակումների պայմաններում անհնար է յուրաքանչյուրի առանձնահատկությունը կարևորել և ուսուցման գործընթացը կազմակերպել այնպես, որ այն արդյունավետ լինի յուրաքանչյուրի համար և համահունչ լինի նրա ուսումնառության տեմպին: Այսինքն՝ ներառական կրթություն իրականացնող դպրոցները չեն կարող, իրավունք չունենան նման ուսուցման գործընթացով իրականացնել ներառական կրթություն, քանի որ այդ դեպքում առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները իրականում ոչ թե ներառվում են, այլ պարզապես ընդգրկվում են ուսումնական գործընթացում, մասնակցում գործընթացին իրենց ոչ ամբողջական պոտենցիալով, որը նրանց թույլ կտար իրապես դառնալ հասարակության լիիրավ անդամ: Հետևաբար, եթե ուսուցման գործընթացում զարգանալու, աճելու և որակյալ կրթություն ստանալու հնարավորության չենք ստեղծում յուրաքանչյուրի համար, ապա այն հեռու է ժողովրդավար ուսուցում կոչվելու իրավունքից[9]:

ԳԼՈՒԽ 2.

[8] «Ինչպե՞ս կարգավորել երեխայի վարքը, չանտեսելով նրա առանձնահատկությունները» Մեթոդական ձեռնարկ ծնողների համար- Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, Երևան 2020

[9] «Ինչպե՞ս խթանել ներառումը նախադպրոցական ուսումնական հաստատությունում» - Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն (ՀՄԿ) , Երևան 2020

2.1. ՈՒսումնառության համընդհանուր ձևավորումը և կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը

Ներառման գործում ՈՒՀՁ-ի կարևոր ներդրումներից մեկը մանկավարժի ուշադրության կենտրոնացումն է սովորողների բազմազանության վրա: Հայաստանում մասնագետների կողմից քայլեր են արվում հաշմանդամության ընկալումը վերաիմաստավորելու համար: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը գնահատելիս սովորողի խնդիրները մատնանշելու փոխարեն առանձնացվում ու երևան են բերվում նրա ռեսուրսները և ներուժը: Խորհրդային տարիներին ենթադրվում էր, որ բոլոր մարդիկ իրար նման են, կատարյալ, գեղեցիկ, առանց խնդիրների: Բոլոր նրանք, ովքեր չէին բավարարում այս չափանիշներին (ունեին տեսողական, լսողական, ֆիզիկական, մտավոր, նույնիսկ խոսքի և հաղորդակցման խնդիրներ), մեծանում էին հատուկ գիշերօթիկ հաստատություններում, իրենց ընտանիքներից ու հասարակությունից առանձնացված: Այսօր Հայաստանում գնալով ավելի է տարածվում բազմազանության նկատմամբ հանդուրժողականությունը, և այն փաստի ընդունումը, որ մարդիկ տարբեր կերպ են ընկալում ու իմաստավորում տեղեկատվությունը, ճանաչում պատկերները, նրանց մոտ նյութի նկատմամբ հետաքրքրություն առաջանում է դասավանդման որոշակի մոտեցման կիրառման դեպքում: ՈՒՀՁ-ը ուշադրություն է դարձնում այն իրողությանը, որ ցանկացած դպրոցում սովորում են կրթության ամենատարբեր պայմանների կարիքներ ունեցող աշակերտներ: ՈՒՀՁ-ը հրաժարվում է այն տեսակետից, որ սովորողները լինում են նորմալ և ոչ նորմալ, կամ սովորական և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող:

Ուսումնառության համընդհանուր ձևավորման սկզբունքները խարսխված են ուսուցման երեք տեսակների վրա՝ ճանաչողական, ռազմավարական և հուզական: Ճանաչողական ուսուցումը վերաբերում է սովորողի՝ հասկացություններ ճանաչելու և մտապահելու կարողությանը: Սրան սովորաբար նպաստում է ուսուցչի աշխատանքը կամ տեքստի ընթերցումը: Ռազմավարական ուսումնառությունը վերաբերում է որոշակի բովանդակությանը, հասկացություններին արձագանքելու սովորողի կարողությանը կամ հմտություններին:

Ռազմավարական ուսումնառության համար սովորողը պետք է ծանոթանա (ճանաչի) և կարողանա արձագանքել հասկացությանը: Ուսուցման այս տեսակը հաճախ անցկացվում է գրավոր առաջադրանքների կամ դասարանում բանավոր պատասխանելու միջոցով: Հուզական յուրացումը վերաբերում է նյութը յուրացնելու

սովորողի մոտիվացիային: Առանց մոտիվացիայի սովորողների կողմից յուրացումը ավելի մակերեսային է:

ՈՒՀԶ-ն ունի երեք հիմնական սկզբունքներ՝ որոնք ուսուցիչներին հնարավորություն է տալիս ուսումնական գործընթացը պլանավորելու սովորողների կարիքներին համապատասխան: ՈՒՀԶ սկզբունքները համապատասխանում են մի գաղափարախոսության, որը ողջունում է սովորողների տարբերությունները: Ուսուցիչները կարող են բարելավել իրարից տարբեր սովորողների ուսումնառությունը՝ ճանաչողական, ռազմավարական և բազմազան հնարավորություններ ստեղծելով: Դասավանդման այսօրինակ ճկունությունը բացառում է ուսուցչի կողմից դասախոսություն կարդալու, սովորողների կողմից նշումներ կատարելու (դասախոսությունը գրի առնելու) և վերջապես, անցածի վերաբերյալ քննություններ հանձնելու ավանդական մոտեցումը: Դասախոսության, նշումների, քննության մեթոդը կարող է խոչընդոտ լինել այն սովորողների համար, ովքեր դժվարանում են հասկանալ ուսուցչի խոսքը, գրել կամ մտապահել: Ավանդական մոտեցումը կարող է նաև խոչընդոտներ առաջացնել այն աշակերտների համար, ովքեր ավելի լավ են սովորում փոխներգործուն միջավայրերում կամ փոքր խմբերում: Դասախոսությունները, նշումները և քննությունը կարող են լինել համընդհանուր ձևավորման մասը, սակայն դրանք դասավանդման ժամանակ կիրառվող բազմաթիվ մեթոդներից ընդամենը մի քանիսն են: ՈՒՀԶ-ի երեք սկզբունքները հետևյալն են՝

1. Ճանաչողական ուսուցման օժանդակում՝ նյութը ներկայացնելու բազմազան միջոցների կիրառմամբ:
2. Ռազմավարական ուսումնառության օժանդակում՝ արտահայտվելու համար բազմաթիվ հնարավորությունների ընձեռմամբ:
3. Հուզական ուսուցման օժանդակում՝ ներգրավման բազմաթիվ միջոցների կիրառմամբ: Կրթական գործընթացի հիմքում երբեմն կարող է ընկնել ՈՒՀԶ ոչ թե մեկ, այլ մի քանի սկզբունք, քանի որ ճկուն մոտեցմամբ կազմակերպված դասերը պահանջում են բազմազան միջոցների կիրառում: Օրինակ, վերևում նկարագրված՝ գրքի ընթերցումը մոտիվացնող մոտեցումը կարող է դիտարկվել ինչպես հուզական, այնպես էլ ռազմավարական ուսումնառության տարբերակ: Ստորև կներկայացնենք ուսուցիչների կողմից նյութի մատուցման, աշակերտների կողմից նյութի վերարտադրման (արտահայտվելու) և դասապրոցեսում աշակերտների ներգրավման բազմազան մոտեցումների կոնկրետ օրինակներ:

Դասարանում համընդհանուր ձևավորման օգտագործումը միտված է ներառական գործընթացի բարելավմանը: Համընդհանուր ձևավորումն ուղղված է

սովորողներին՝ որպես սովորական ու առանձնահատուկ երեխաների տարբերակումը վերացնելուն, ելնելով նրանից, որ յուրաքանչյուր անհատ տարբեր կերպ է սովորում և որ բազմազան մոտեցումների կիրառումը կօգնի բոլոր սովորողներին: Միաժամանակ, համընդհանուր ձևավորումը ավելի խոր իմաստ ունի, քան պարզապես լավ դասավանդումը: Ըստ Էդիբերնի (2010), համընդհանուր ձևավորումը ուսուցիչների կողմից բազմազանության արժևորման փիլիսոփայական դիրքորոշման և, միաժամանակ, անընդմեջ սովորելու և կատարելագործվելու անհրաժեշտության ընդունումն է: Հեշտ չէ ունենալ համընդհանուր ձևավորման սկզբունքներին համապատասխանող դասարան: Սակայն, երբ ուսուցիչները հիմնավորապես ընդունում են դասարաններում տարբեր ունակությունների տեր սովորողների ներկայությունը և դասապրոցեսը կազմակերպում են այնպես, որպեսզի ներգրավեն բոլոր սովորողներին, ՈՒՀՁ-ն կատարելագործվում է: Գոյություն ունեն դասավանդման ամենատարբեր մոտեցումներ, որոնք ուսուցիչների կողմից կարող են օգտագործվել դասարանում համընդհանուր ձևավորման խթանման համար: Այս մոտեցումներից մի քանիսը նկարագրված են ստորև: Ուսումնական տարվա ընթացքում, իրենց սովորողներին ճանաչելով ու օգտվելով աշակերտներին նկարագրող տեղեկատվական աղբյուրներից, ուսուցիչները կարող են դասավանդումը հարմարեցնել իրենց սովորողների կարիքներին: Միևնույն ժամանակ համընդհանուր ձևավորման գաղափարական հիմքը համահունչ է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոնվենցիայի (Միավորված ազգեր, 2006) առավել լայն փիլիսոփայությանը: Կոնվենցիան առաջադրում է հաշմանդամություն ունեցող անձանց օժանդակության ավելի լայն մոտեցում ներառական կրթության միջոցով, որը մանկավարժներից պահանջում է ապահովելու մատչելիություն բոլորի համար: Ըստ կոնվենցիայի 9-րդ հոդվածի՝ Հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և կյանքի բոլոր բնագավառներում լիակատար մասնակցության հնարավորություն ընձեռելու նպատակով մասնակից պետությունները ձեռնարկում են համապատասխան միջոցներ, որպեսզի նրանց համար, մյուսների հետ հավասար հիմունքներով, ապահովեն ֆիզիկական միջավայրի, փոխադրամիջոցների, տեղեկատվության և հաղորդակցության (ներառյալ տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաներն ու համակարգերը), ինչպես նաև այլ պայմանների ու ծառայությունների մատչելիությունը, որոնք հասանելի են և տրամադրվում են հանրությանը և՛ քաղաքներում, և՛ գյուղական վայրերում: Այս միջոցները ներառում են խոչընդոտների և արգելքների բացահայտումը և վերացումը: Գործնականում, բազմազան միջոցների կիրառմամբ նյութը ներկայացնելը, արտահայտվելու համար բազմաթիվ հնարավորություններ ընձեռելը, և սովորողի համար ներգրավվածության

բազմազան միջոցների տրամադրումը կարող է տարբեր դասարաններում տարբեր լինել: Այսպես, դա կարող է նշանակել ընդհանուր առմամբ, բազմազան մոտեցումների կիրառում նյութը ներկայացնելիս, բազմազան հնարավորությունների ընձեռում աշակերտներին՝ սովորածը վերարտադրելիս և դասապրոցեսում ներգրավվելիս: Օրինակ՝ ուսուցիչը կարող է ցուցադրել տողատակերով տեսահոլովակ, որպեսզի սովորողները միաժամանակ կարողանան կարդալ տեսահոլովակում ներկայացվող տեղեկատվությանը վերաբերող տեքստը: Սա կարելի է համարել պայմանների բարելավում լսողության խանգարում ունեցող սովորողի համար, սակայն բովանդակությունը հասկանալի դարձնելու առումով՝ ճկուն մոտեցում է բոլոր սովորողների համար:

2.2. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում և ԱՈՒՊ-ներ

Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումն (այսուհետ՝ Գնահատում) իրականացվում է մանկավարժահոգեբանական գնահատման չափանիշներին համապատասխան և նպատակ ունի սահմանելու՝ 1) երեխայի կրթության առանձնահատուկ պայմաններ՝ ապահովելով ծրագրային, մեթոդական և այլ միջավայրային անհրաժեշտ հարմարեցումներ, 2) ՀՀ օրենքով սահմանված կարգով և դեպքերում ֆինանսավորման բարձրացված չափաքանակ տրամադրելու հիմքերը, 3) մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մակարդակը, ծավալները և տևողությունը:

Երեխայի Գնահատման գործընթացն իրականացվում է կրթական յուրաքանչյուր աստիճանի առաջին տարում (առաջին, հինգերորդ և տասներորդ դասարաններում), ինչպես նաև՝ երբ երեխայի մոտ, ուսումնառության ընթացքում, արտակարգ իրավիճակներով պայմանավորված՝ նկատվում են կայուն դժվարություններ: Գնահատումն իրականացվում է երկու փուլով. 1) դպրոցական մակարդակի Գնահատում, 2) տարածքային մակարդակի Գնահատում: Վկայագրված երեխայի առաջընթացը կամ հետընթացը գնահատելու համար յուրաքանչյուր տարի իրականացվում է վերագնահատում: Գնահատումը մասնակցային գործընթաց է, որին մասնակցում են՝ երեխան, նրա ծնողը, աջակցության խումբը, երեխայի ուսուցիչները: Գնահատումն իրականացվում է երեխայի բնական միջավայրում՝ դպրոցում, մանկապարտեզում, ընտանիքում:

Անհատական ուսուցման և զարգացման պլանը (ԱՈՒԶՊ) երեխայի կարիքի և առանձնահատկությունների հիման վրա կազմված փաստաթուղթ է, որը սահմանում է

երեխայի զարգացման, ուսուցման և դաստիարակության տարեկան նպատակները, խնդիրները և դրանց հասնելու գործողությունները (կարիքի դեպքում՝ նաև ՄՀ աջակցող ծառայությունները) և ժամկետները՝ նախադպրոցական կրթության պետական չափորոշչի և կրթական ծրագրերի սահմանված վերջնարդյունքները երեխայի համար հասանելի դարձնելու համար: ԱՈՒԶՊ-ը մշակում են ուսումնական հաստատությունը և ՏՄԱԿ-ը տարածքային մակարդակի գնահատման արդյունքում ԿԶԱՊԿ ունեցող յուրաքանչյուր երեխայի համար այն մշակվում է մեկ ուսումնական տարվա համար:

ԱՈՒՊ-ը հաստատված ձևաչափին համապատասխան գրավոր մշակվող թիմային պլանավորում է, որը կառուցվում է սովորողի կարիքների, ուժեղ կողմերի ու հետաքրքրությունների և հանրակրթության պետական չափորոշիչների և ծրագրերի հիման վրա: ԱՈՒՊ-ը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սոովորողի ԱՈՒՊ-ը հաստատված ձևաչափին համապատասխան գրավոր մշակվող թիմային պլանավորում է, որը կառուցվում է սովորողի կարիքների, ուժեղ կողմերի ու հետաքրքրությունների և հանրակրթության պետական չափորոշիչների և ծրագրերի հիման վրա: ԱՈՒՊ-ը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սոովորողի կրթության հիմքն է: Ուսուցիչներից շատերը ծանրաբեռնվածության և անհանգստության զգացողություն են ունենում ԱՈՒՊ-ի մշակման և իրականացման գործընթացների ժամանակ: Այնուամենայնիվ, ուսուցիչները ԱՈՒՊ-ի մշակման թիմի հիմնական մասն են կազմում: Դուք՝ որպես ուսուցիչ, ոչ միայն օգնում եք դասարանում սովորողի առաջընթացի գրանցմանը և նպաստում ուսուցման գործընթացում նրա մասնակցության բարելավմանը, այլև արժեքավոր ներդրում եք ունենում այն պլանի մշակման ժամանակ, որը կօգնի մեզ և սովորողին հաջողության հասնել հանրակրթության ծրագրերում: ԱՈՒՊ-ը մշակվում է այն սովորողների համար, ովքեր ունեն դժվարություններ կրթության մեջ և սահմանված կարգով գնահատվել ու ճանաչվել են որպես կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող: Նրանք չեն կարողանում յուրացնել հանրակրթական ուսումնական ծրագրերը առանց համապատասխան ծրագրային կամ միջավայրային հարմարեցումների:

Գնահատել ԱՈՒՊ-ը: Ուսումնական տարվա ընթացքում սովորողի ուսումնական առաջընթացի գնահատում հաճախ է իրականացվում (ընթացիկ, կիսամակային, տարեկան) համոզվելու համար, որ սովորողը հասնում է ԱՈՒՊ-ում դրված նպատակներին: ԱՈՒՊ-ում սահմանված նպատակներն ու նպատակադրումները ցանկացած պահի կարող են փոփոխվել՝ ըստ անհրաժեշտության:

Ուսուցման կոլեկտիվ եղանակի ամենասկզբունքային և առանցքային կողմերից մեկը կրթության անհատականացումն է: Յուրաքանչյուր երեխա յուրաքանչյուր

առարկայից պետք է ունենա իր անհատական ուսումնական պլանը, որի կազմմանը մասնակցում է նաև երեխան: Այսինքն վերահանելով նրա առանձնահատկությունները, գիտելիքները, յուրացման տեմպը, երեխան նաև հստակ տեղեկանում է առաջիկա ամիսներին յուրաքանչյուր առարկաներից իր անելիքների հաջորդականությանը, այսինքն իր ԱՈՒՊ-ին (անհատական ուսումնական պլան): ԱՈՒՊ-ը ներառական դպրոցներում կազմվում է բացառապես ԿԱՊԿՈՒ երեխաների համար:

Անհատական ուսուցման պլանը (ԱՈՒՊ -ը) ուղեցույց է կամ միջոց ուսուցիչների, դաստիարակների, երեխաների հետ աշխատող մասնագետների, ծնողների համար: Այն օգնում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների անհատական ուսուցումը հանրակրթական դպրոցներում արդյունավետ կազմակերպելուն և նրա կրթական հատուկ կարիքները բավարարելուն: Սովորողների ԱՈՒՊ-ը կազմակերպվում է դիտարկման և գնահատման արդյունքների հիման վրա: *ԱՈՒՊ-ը կազմում է հետևյալ բազմամասնագիտական խումբը.*

1. ուսուցիչ
2. հատուկ մանկավարժ
3. սոցիալական աշխատող
4. ծնող
5. այլ մասնագետներ (հոգեբան, սուրդոմանկավարժ և այլն):

ԱՈՒՊ-ը կրթական գործընթացի պլանավորումն է: Այն պետք է ունենա հստակ ձևակերպված վերջնանպատակ, տարեկան նպատակ, կարճաժամկետ խնդիրներ (վերջնանպատակին և տարեկան նպատակին հասնելու համար) և տարեկան ծրագիր: ԱՈՒՊ-ում անպայման պետք է նշվի, թե որ ծրագրերից է օգտվել խումբը նպատակները և կարճաժամկետ խնդիրները ձևակերպելու համար: ԱՈՒՊ-ները կազմվում են պետության կողմից հաստատված հատուկ կրթության առարկայական չափորոշիչներով և ծրագրերով, որոնք առանձնացված են ըստ թեթև, չափավոր, ծանր մտավոր հետամնացության: ԱՈՒՊ-ը գրվում է որոշակի ժամանակահատվածի համար: ԱՈՒՊ-ը կազմող թիմը պետք է հավաքվի 6, իսկ անհրաժեշտության դեպքում 3 ամիսը մեկ անգամ, որպեսզի վերանայի նպատակներն ու խնդիրները, քննարկի երեխայի ուսումնական առաջընթացը: Երեխայի մեծանալու հետ փոփոխվում են նրա ուսումնական կարիքները: ԱՈՒՊ -ը պետք է փոխվի ըստ անհրաժեշտության:

ԱՈԻՊ-ի միջոցով ձևակերպվում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթության նպատակները: ԱՈԻՊ-ներն օգնում են դպրոցական թիմերին պլանավորելու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների ուսումը և նրանց համար ծառայությունների տրամադրումը: Դպրոցների ղեկավարները պետք է ներկա լինեն ԱՈԻՊ-ի մշակման

նպատակով կազմակերպվող հանդիպումներին, որպեսզի իմանան, թե ինչ ռեսուրսներ կարող են անհրաժեշտ լինել և թե ինչպես է իրենց անձնակազմը հասնելու նպատակներին: ԱՈԻՊ-ը կազմող բազմամասնագիտական թիմերը կարող են շտապել նպատակներին հասնելու համար՝ առանց հաշվի առնելու աշակերտների և նրանց ընտանիքների հույսերը: Այս առումով կօգնի երեխաների համար տարբերակների և հարմարությունների ընտրությունն ու գործողությունների պլանի մշակումը: ԱՈԻՊ-ներն անհատականացված են, հետևաբար մի աշակերտի համար սահմանված նպատակները չպետք է ուղղակիորեն արտագրվեն մեկ այլ աշակերտի համար:

ԱՈԻՊ-ի նպատակներն ու խնդիրները պետք է կենտրոնանան հիմնական հմտությունների ձեռք բերման վրա, որոնք օգնում են երեխային դառնալ ինքնուրույն և ինքնավստահ:

Չի կարելի երեխայի առաջընթացը չափել սուբյեկտիվ դիտարկումների կամ գնահատականների միջոցով: Գնահատականները առաջընթացի օբյեկտիվ չափանիշներ չեն, քանի որ գնահատականի վրա շատ գործոններ են ազդում, օրինակ՝ ջանասիրությունը, հաճախումները, երեխայի վարքը, վերաբերմունքը:

2.3. Հայոց լեզու և գրականություն դասավանդող ուսուցչի դերը ներառական կրթության մեջ

«Յուրաքանչյուր ուսուցչի խնդիրն է, որ պատրաստել մասնագիտություն, որը ապահովում է անհատական և կոլեկտիվ պատասխանատվություն բարելավելու բոլոր երեխաների ուսուցումը և մասնակցությունը»:

Ներառական կրթության հիմնական գործընթացը ենթադրում է, որ ուսուցիչն ունի որոշակի գիտելիքներ և պատկերացում տարբեր ունակություններով և կարողություններով սովորողների կարիքների մասին, ծանոթ է կրթական մեթոդներին և ուսումնական պլանների ռազմավարությանը: Այս տեսանկյունից հայոց լեզվի և գրականության ուսուցիչը կարևորագույն դեր է խաղում կրթության որակի ապահովման հարցում և, միաժամանակ, ուսուցչի որակը ամենից շատ պայմանավորում է սովորողի հաջողությունը, քան որևէ այլ գործոն՝ ներառյալ դասարանային միջավայրային պայմանները:

Ուսուցիչը՝ որպես համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործընթացի կենտրոնական օղակ, նախ և առաջ ունի աջակցության և ուղղորդման կարիք:

Ժամանակակից հասարակության կրթական համակարգի հրամայականը համընդհանուր ներառման ֆոնին հավասար հնարավորությունների ստեղծումն է: Այն բարդ, փուլային գործընթաց է, որը պետք է սկսվի յուրաքանչյուր անհատի, մանկավարժի, ծնողի, ապա նաև աշակերտի գիտակցությունից: Շատ հաճախ, հատկապես ուսուցիչների պարագայում, ներառումը որպես գործընթաց առաջանում է հիմնավորված, չհիմնավորված վախեր, սեփական ուժերի նկատմամբ թերահավատություն: Այս ամենը հատուկ մանկավարժական բազային գիտելիքների, տեղեկատվության և պրակտիկ փորձի պակասի հետևանք կարող է լինել:

Ամենուրեք ներառական կրթությունը հատուկ կարիքներով երեխաների համար առավել նախընտրելի մոտեցում է: Այս շրջանակներում ուսուցիչների դերն է ոգևորել հատուկ կարիքներով երեխաներին ընտրություն կատարել ինչքան հնարավոր է հաճախ, լինել ազատ, սովորել իրենց իսկ միջավայրում և հաջողություններ ունենալ: Ուսուցիչները խթանում են ուսումնական գործընթացը՝ ուղղորդելով, ոգևորելով, համագործակցելով և փորձելով կիրառելով ուսուցման բազմակի մեթոդներ, որոնք նախատեսված են տարբեր ուսումնական ոճերի համար և հեշտացնում են ընտրություն կատարելու կարողությունը աշակերտի կողմից և ինքնուրույն գործելու ունակությունը: Ինչևէ, ներառական դպրոցում հատուկ կարիքներով երեխաների հետ աշխատող ուսուցիչների պատրաստումը և օժանդակումը կարծես թե փոփոխություններ է ապրում[10]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսունասիրելով համընդհանուր ներառական կրթությունը և դրա առանձնահատկությունները Հայաստանում և վերլուծելով ներառական կրթության կարիք ունեցող երեխայի օրինակը հանգում ենք այն եզրահանգմանը,որ

[10] https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/convention-rights-child

- Ներառական կրթությունը կրթական այնպիսի ծրագիր է, որը բացառում է ամեն տեսակ խտրականություն երեխաների նկատմամբ, ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց հանդեպ, կրթական համակարգում ստեղծում է ուրույն պայմաններ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքներ ունեցող անձանց համար:
- Համընդհանուր ներառական կրթությունը ձգտում է հասնել ուսուցման նկատմամբ առավել ճկուն մոտեցման՝ բավարարելու մարդկանց զանազան կրթական պահանջները: Եթե ներառական կրթության մտցրած փոփոխությունները ուսուցումն ավելի արդյունավետ դարձնեն, ապա կշահեն բոլոր երեխաները, այլ ոչ միայն առանձնահատուկ կրթության կարիքներ ունեցողները:
- Նման համակարգի ներդրումը ոչ միայն օգուտներ է տալիս խնդիրներ ունեցող երեխային և իր ծնողին այլ նաև մեծ օգուտ է տալիս նաև սովորական երեխաներին ընդլայնելով նրանց անձնական հնարավորությունները, օգնում զարգացնել այնպիսի որակներ, ինչպիսիք են ՝մարդասիրությունը,հանդուրժողականությունը, օգնության պատրաստակամությունը, ընկերասիրությունը,հոգատարությունը:
- Յուրաքանչյուր երեխա պահանջում է անհատական մոտեցուն ուստի չի կարելի ստեղծել ներառական կրթության համընդհանուր կաղապար, որը կարելի լինի առանց որևէ փոփոխության ներմուծել յուրաքանչուր հասարակություն: Ամեն մի հանրություն ինքը պիտի մշակի և իրագործի սեփական գաղափարները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ներառական կրթությունը գործնականում(ուսումնամեթոդական ձեռնարկ)Պետրոսյան Ս., Երևան, 2018
2. Ներառական կրթության հիմնախնդիրները, Հեղինակների խումբ, Գյումրի, «ԷԼԴՈՐԱԴՈ» հրատարակչություն, 2017
3. «Ներառումը նախադպրոցական ուսումնական հաստատությունում: Խաղեր և վարժություններ:»Մեթոդական ուղեցույց ձեռնարկ մանկավարժների համար: Հեղինակների խումբ, ՀՄԿ, Երևան 2021 4. Նախադպրոցական կրթության մասին օրենք

4. «Ինչպե՞ս խթանել ներառումը նախադպրոցական ուսումնական հաստատությունում» - Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն (ՀՄԿ) , Երևան 2020
5. «Ինչպե՞ս կարգավորել երեխայի վարքը, չանտեսելով նրա առանձնահատկությունները» Մեթոդական ձեռնարկ ծնողների համար- Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, Երևան 2020
6. Ներառական կրթության ռազմավարություններ, Դասագիրք Մինեսոթայի համալսարան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Հայաստանի Հանրապետություն ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակ:
7. Ի՞նչ ասել է ներառական կրթություն https://parents.disabilityinfo.am/inclusive-education/ [դիտված 22 դեկտեմբերի 2022]
8. https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/convention-rights-child
9. http://www.ncpcr.gov.in/Reports/UNESCO_World_Declaration_on_Education_for_All%201990.pdf
10. Особенности инклюзивного дошкольногоբ образования https://scienceforum.ru/2017/article/2017039073